ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/8749-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի (Կ-999-20.01.2025-ՏՏԳՇ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը՝

«Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծում՝

1. Առաջարկում ենք «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը համապատասխանեցնել Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությունում կատարվող լրացմանը և Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքի 89-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1.1-ին մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը նախագծի 1-ին հոդվածն առաջարկում ենք խմբագրել, լրացնել նաև նոր՝ 2-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝

*«**Հոդված 1.** «Պետական գույքի կառավարման մասին» 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝*

1) «մարմիններին» բառից հետո լրացնել «և կազմակերպություններին» բառերը.

2) հանել «և օտարման առաջարկվող» բառերը:

***Հոդված 2.** Օրենք 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում՝*

1) «մարմիններին» բառից հետո լրացնել «և կազմակերպություններին» բառերը.

2) հանել «և օտարման առաջարկվող» բառերը:»

2. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջը, առաջարկում ենք նախագծի 2-րդ (լրամշակված 3-րդ) հոդվածում «ենթաօրենսդրական ակտերը» բառերը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը» բառերով:

3. Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառն առաջարկում ենք փոխարինել «փոփոխություններ և լրացումներ» բառերով՝ հաշվի առնելով, որ նախագծում կատարվում են և՛ փոփոխություններ և՛ լրացումներ:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին օրենքի նախագծում՝

4. Նախագծի 1-ին հոդվածում կիրառված «(այսուհետ՝ Օրենք)» ձեւակերպումն առաջարկում ենք հանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծում օրենքին այլևս հղում չի կատարվում:

5. Հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի առաջին ընթերցմամբ ընդունված ««Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությունում կատարվող լրացմանը և Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքի 89-րդ հոդվածում լրացվող

նոր՝ 1.1-ին մասը անհրաժեշտ է իրավակարգավորումների համապատասխանություն նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին՝ համաձայն որի՝ համայնքի ղեկավարի պետության պատվիրակած լիազորությունների շարքում նշվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օգտագործման տրամադրելու համայնքի ղեկավարի լիազորությունը:

Առաջարկում ենք «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ևս «եւ օտարման առաջարկվող» բառերը հանել՝ իրավակարգավորումների համապատասխանությունը ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով վերագրյալը՝ փաթեթն առաջարկում ենք լրացնել նոր նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում՝

1) «մարմիններին» բառից հետո լրացնել «և կազմակերպություններին» բառերը.

2) հանել «և օտարման առաջարկվող» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ